



from the office of the Diocese of the Armenian Church of America

# news:

Հրատարակութեան խնդրանքով

ԵՐԿՈՒ ՀՆԱՏԻԴ ԳԻՐՔԵՐ ՆՈՒԽՐՈՒԱԾ Ս. ՎԱՐԴԱՆ  
ՄԱՅՐ ՏԱԶԱՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Տիկին Արտեմիս Գարակէօցեան հետեւեալ երկու հնատիպ գիրքերը  
նուիրած է Ս. Վարդան Մայր Տաճարի թանգարանին.

- ``Աղօթագիրքը Ըստ ժամակարգութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ``  
հատորը, որ տպուած է 1891 թուականին Կոստանդնուպոլսոյ մէջ, կազմը-  
ւած ոսկեզօծ կրիայի պատեանով, ուր արձանագրուած է Տիկին Գարակէօց-  
եանի մօր անունը՝ ԱՐԱՔՍ.

- ``Գիրք Սաղմոսաց Դաւթի`` հատորը, որ տպուած է 1858 թուակա-  
նին Վենետիկի մէջ, կաշեկազմ պահարանի մը մէջ դրուած։

Այս երկու հնատիպ գիրքերն ալ լաւ վիճակի մէջ են եւ ունին բազ-  
մաթիւ զարդանկարներ։

Ս. Վարդան Մայր Տաճարի թանգարանը, որուն հաւաքածոյին մաս կը  
կազմեն ձեռագիր մատեաններ, հնատիպ գիրքեր, յախճապակիններ, հին ոսկե-  
ղէններ, քանդակներ, իւղանկարներ եւ զորգեր, իրական զանձարան մըն է  
հայ ժողովուրդի մշակոյթի ու պատմութեան պատկանող արժէքաւոր իրերու։  
Թանգարան այցելած են բազմահազար անձեր աշխարհի ամէն կողմերէն եւ  
իրենց հիացումը արտայատած են այնտեղ ցուցադրուած իրերուն մասին։

Վերջերս Ս. Վարդան Մայր Տաճարի թանգարանին մէջ ցուցադրութեան  
դրուած են հայկական նուրբ ասեղնազործութիւններ, որոնց մասին զնահա-  
տական գրութիւններ հրատարակուած են։

Դիման Առաջնորդարանի

Փետրուար 27, 1980  
Նիւ Եղիք, Ն.Ե.